




ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 104

19 ՅՈՒԼԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՒ ԵՐ
ԵՐԱՆ
ՏՈՒՄ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 19 Յուլիս 1913 Թիւ 104

«Մերական Բանաստեղծական Պիոս Ժ. կր մայրէ որ Կարողիկէ Արձագանգ շաբաթերը շաբաթական Հայաստանի կարողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն որսացին Կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Կամակ Կարգ. Մէրի Տէլ Վայի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ-Կարողիկէ Պատրիարք Կիլիկի 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅՐԷ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՆՈՍ

(Շար. եւ վերջ)

12. — Իսկ Օրմանեան, ըստ իր սովորութեան, կը հաստատէ կամ կը մերժէ, ո՛չ ապացոյցով, — զի կը նեղուի փաստերէն՝ գիտնալով որ զինքը կը խեղդեն անոնք, — այլ միայն որովհետեւ իր յետին գաղափարին ծառայելու համար այնպէս պէտք է: Դատաւորը ինքն է միայն. պէտք է հաւատալ իրեն՝ երբ վճռէ. այսպէս վարուած է նոյն իսկ Ս. Աւետարանի մասին (Տե՛ս Կ. Արժ. Բ. տարի, Թիւ 69, էջ 644—647). այսպէս կը վարուի նաեւ պատմութեան նկատմամբ. պատմութիւնը իր կամքին կը ծառայիչնէ նեղմիտ կուսակցականութեամբ. կրկնելով չարուհակ

թէ իր աշխատութիւնը պատմական(?) է. Անոր համար առ հասարակ մէջբերումներ (citation) չ'ընէր. քանզի եթէ ընէ՝ կը խայտառակուի: Անո՛ր համար պատճառաբանութեան կը խուսափի՝ ըննադատական գործ չէ ըսելով. զի եթէ պատճառաբանէ՝ կը խայտառակուի: Կ'ըսէ՝ Թէ՛ Գրիգորի մինչեւ Հռոմ ճանապարհորդութիւն ընելը բոլորովին անհիմն ենթադրութիւն մըն է, որ ոչ մէկ կերպով պատմութեան հետ չզոդուիր (Ազգապատում էջ 192). Կ'ըսէ. Գրիգոր չէր կրնար մինչեւ Հռոմ երբայ զինքը ցուցադրելու: Քանի մը անարժէք առարկութիւններ իբր փաստ չարելէն վերջ, յանկարծ՝ Յայտնի է ուրեմն, Կ'ըսէ, որ ո՛չ Գրիգոր եւ ո՛չ Տրդատ Հռոմ չեն գացած, եւ Սեղբէսրոսի վերագրուած տուչութիւնը անհիմն յերկրուած մըն է (Անդ, էջ 110): Այս ուղեւորութիւնը, զոր Կ'ըսէ Ազգաբնագիրոսի մէջ ՅԻՇՈՒԱԾ կը տեսնենք,

քնաւ արժէք չունեցող պատճառով մը կը դնէ շուրջ 324ին . և արագ արագ թռչտելով ազգային պատմիչներու անհատնում խումբին վրայէն , որոնք այս ուղեւորութիւնը կը կը պատմեն , կը ճգնի ջրել անոնց տուած միարարն վկայութիւնը , — ի՞նչ որ զինքը կը չարչարէ , — վերջապէս յանգելու համար յերիւրածոյ Դաւանց բողոքին , ուր ազատ շունչ մը կ'առնու , քանի որ այն՝ սուգապէս անվաւեր է (Անդ էջ 108) . և հոն պարծանօք կը հետեւցնէ . Այդ պատմութիւնն շատ հաճելի երեւցած է յասիմամիս եւ հռովմեադաւաննոր հեղինակներու , որք ուզած են անոր սուգութիւնը պատկերացնել , երբ ոչ իւր ամբողջ պարագաներով , գոնէ իւր եական մասին մէջ , որ է Գրիգորի Հռոմ երբայր եւ Սեղեւստոսի շնորհած ինքնագլխութիւնը (!) : Սակայն կը յաւելու անմիջիժար . Յաւալի պարագայ մը եղած է անոնց ձայնակից տեսնել վերջին ասեմներու մէջ , Մասթեոս Ա . Կաթողիկոսը (Անդ էջ 109) : Իսկ իր Հայոց եկեղեցին անունը կրող գրուածքին մէջ , ուր իր քմահաճ գրչին տակ պատմութիւնը դարձած է լոկ վիպասանութիւն , Ս . Սեղեւստոսի Հայոց հետ ունեցած առնչութիւնը ուղղակի և միայն կեղծ Դաւանց թուղթին վրայ կը հիմնէ (էջ 34) : Գոհե՛լ միտթաւութիւն :

Ասոնք բոլոր մէկ յետին մտածմունքէ , մէկ մարմաջէ միայն յառաջ կու գան . այսինքն հաստատել թէ Հայոց եկեղեցին անկախ է , ինքնագլուխ է , Հռոմի գերիշխանութենէն ազատ է . զայս կը կրկնէ ու կը կրկնէ . և նոյն իսկ չի խղճեր ըսելու թէ՝ Հայոց արքունի սկզբնական եւ կատարեալ անկախութիւնը հայ եկեղեցւոյ բոլոր հայրապետներն ու մասեմագիրները շարունակ եւ համարձակաբար հռչակած են (!!!) : Այսպէս կ'ուզէ , և ի զուր ճիգեր կ'ընէ որ պատմութիւնն ալ այսպէս ուզած ըլլայ : Ասոր համար դեռ շատ աւելի պատմական սխալներ , իմաստակութիւններ կը գործէ , կը քրոնի հաստատելու համար թէ Աթոռներու , նոյն իսկ Պատրիարքականներուն հաստատութիւնը յամենայնի եւ ըստ ամենայնի կը հա-

մապատասխանեն քաղաքական բաժանումներու , հետեւաբար , կ'ըսէ , բոլորովին մտացածին է , բոլորովին բռնագրութիւն է Հռովմեականաց պնդելը թէ Հռոմ պատրիարքիւն ճանչցուած է Պետրոսի գերեզմանովը , Անտիոք՝ Պետրոսի այնտեղ առժամաբար մնալովը , ևն . (Ազգպմ . էջ 91—92) : Կը տեսնէ՞ք մղձաւանջը . իտալերէն առակ մը կ'ըսէ . լեզուն միշտ կ'երբայ ցաւող ակռային : Մինչդեռ պէտք էր որ ինքը գիտնար թէ եկեղեցւոյ բոլոր Հայրերը և Սուրբերը ի հաւասոց սորվեցուցին Հռոմայ Ս . Աթոռին զըլխաւորութիւնը : Օրմանեան իր կարծիքը այդ սրբազան վարդապետութեան դէմ կ'ուզէ հանել . ծովու դէմ խնդճ կաթիլ մը անմաքուր . . .

Եւ իր բոլոր քայլերը հաստատել կարծելով , ամէնէն փխրուն լեռնակողի մը վրայ իսկ յենակէտ մը կը փնտռէ , յամառաբար կը կառչի , սակայն հողակոյտին հետ միասին վերջապէս վար կը զլորի : Օրինակ մը . տեսէ՛ք ի՞նչ կը գրէ Խորենացւոյ մասին , անտարաձին . Նկատողութեան արժանի է որ Խորենացին Ագաթանգեղոսի պատմութիւնը սուշեւն ունենալով իսկ , Գրիգորի համապարհորդելը չէ գրած , որով կա՛մ զայն կեղտկարծ դատած է , եւ կամ ուղեւորութեան հաւուածը յետոյ Ագաթանգեղոսի մէջ ներմուծուած է (Ազգպմ . էջ 110) : Եթէ ուզէր , կրնար շատ լաւ դիտել , կա՛մ դիտած է իրօք՝ բայց չ'ըսեր , թէ՝ Խորենացին Տրդատայ և Ս . Գրիգորի պատմութեան համար Ագաթանգեղոսը իբր սուգապատում և լիակատար հեղինակ մը գտնելով , չէ ուզած կրկնել անոր գրածներուն մանրամասնութիւնները , այլ ընթերցողը միշտ անոր կը զրկէ , շուրջ տարանգամներ . կ'անուանէ զանի՝ Աջող փառաւորաբար Տրդատայ (Բ . Գլ . Կէ) . կը կրկնէ յար՝ իսկ զմնացեալս ի գրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս (Հգ .) . Իսկ որ ինչ ի նորա ժամանակն գործէ , յայտնէ քեզ Ագ . (Հթ .) . Որպէս ուսուցանէ քեզ Ագ . (Ձ . 27 . 22) , ևն . ևն . : Միայն Խորենացւոյ պատմութեան համար մտադիր կ'ընէ մասնաւորապէս

թէ՝ որովհետեւ Ազ. այս դէպքերը համառոտիւ կը պատմէ, անոր համար ինքն ընդ երկար պիտի պատմէ. կ'ըսէ. Յաղագս սոքա եւ համահոսմիցն կարն ի կարնոյ իմն անցանելով աջող փարսուղարն Տրդաւայ Ազար., փոքր ի շատ պատմէ... Արդ քեպէս եւ Ազ. այսպէս համահոս եանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ յաւես ձիգ եւ երկայն առնել զպատմութիւն ժԱՄԱՆԱԿԻՍ ԱՅՍՈՐԻԿ (Բ. Կէ. էջ 147):

Ուստի այս պայմաններու մէջ Խորենացւոյ լռութենէն մերժում հետեւցնելը, բացարձակապէս անյաջող կեղծիք մըն է, ընթերցողաց աչեւերուն մոխիր փչել է:

Նոյնպէս երբ Օրմանեան իր կարծիքին, եւ առաւել իր կամքին նպատաւոր բան մը գտնէ. թէեւ անվաւերական ըլլայ, նոյն ընդ նոյն խոշոր հետեւութիւններ կը հանէ անկէ: Օրմանակ մը միայն. Զենոբայ գրքին մէջ (էջ 9—10, Տպ. Վնեստ. 1889) Կեսարիոյ Հայրապետին Ղեւոնդիոսի նամակ մը կայ առ Ս. Գրիգոր. Լուս. յորում կ'ըսէ նա. «Բեւ ծագեաց արեգակն արդարութեան Քրիստոս ի դոսա, եւ դու բնորեացար ի ճեղի բնորեաց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի եւ Թաթեոսի: Բայց այդ նամակները վաւերական չեն նկատուած: Սակայն Օրմանեան, որ գրչի հարուածով մը ճեմափարսապատում պատմիչներու բանակ մը կը ջնջէ եւ անոնց պատմած եւ ընդունած դէպքը կ'ոչնչացնէ, տեսէ՛ք հոս ի՞նչպէս կը պատճառաբանէ, իր գործին գալուն համար. «Հոգ չէ որ Ղեւոնդիոսի նամակներուն վաւերականութեան վրայ դիտողութիւններ կարեանալ յարուցուիլ, ամեն առթի մէջ անոնք հին գրութիւններ են, որ երկու կողմերուն համոզումները կ'ապացուցանեն:»—Հապա՛ւ ամենավաւերական պատմաբաններուն հազարիցս կրկնած գէպքերը այսչափ զիւրութեամբ կրնան ուրացուիլ, մերժուիլ, ոչնչացուիլ...

Օրմանեան կ'ըսէ. «Այո՛, որովհետեւ Ինժիւնէրայէս պէտք է. ինչ որ ԻՄ գաղափարիս, կամքիս, այժմեան վիճակիս չի ծառայեր, պէ՛տք է ուրանալ, Աւետարան, պատմութիւն, աւանդութիւն, հոգ չէ»... !!!

Ահա՛ մարդը եւ իր փաստը:

Սակայն ինքը, որ ժամանակաւ աստուածաբան եղած է, ուրացութենէն առաջ, քաջ գիտէ ինքը թէ Պետրոսի գլխաւորութիւնը, Հռոմի Ս. Աթոռոյ գերիշխանութիւնը, աստուածատուր եւ անկողնապետի իրաւունք մըն է, որուն ոչ միայն Աբիսոս, Լուսեր, Վոլթէռ կամ ընկերութիւն, այլ եւ ոչ իսկ գոթիոց զոնները պիտի չկարենան երբեք յաղթել. քաջ գիտէ ինքը թէ Հայոց Ս. Աթոռէն կախումը՝ Ս. Գրիգորի Հռոմ երթալէն բնաւ կախում չունի, այլ Ս. Աւետարանէն, ուղղակի Քրիստոսի Աստուծոյ Կամքէն, որ իր եկեղեցին Վէմին վրայ, Պետրոսի վրայ հիմնեց, եւ անոր յանձնեց անխտիր իր գաղութներն ու ոչխարները արածելու. ինքը՝ Օրմանեան, այս ճամարտութիւնները քաջ գիտէ, եւ քաջ գիտէ եւս թէ պէ՛տք հաւատոյ մաս եւ փրկութեան համար հարկաւոր վարդապետութիւն մը ըլլալով, ինչպէս բոլոր Ս. Հարք եւ վարդապետք կը սորվեցնեն, ահաւոր ոճիր մըն է ամբողջ ժողովուրդ մը իր մոլորութեան մէջ հաստատելու աշխատիլ՝ բանիւ մանաւանդ գրով. քաջ գիտէ եւս թէ՛ Քրիստոսի Տեառն խօսքով, խիստ է ընդդէմ խթանի ահացել, եւ պէտք չէ խաղալ շնորհաց ու կեանքի հետ եւ պէտք չէ խիղճը աշխատիլ լռութեան դատապարտելու՝ վասն անին Հրէից, փոխանակ գտնէ — ընդ երեկս, — զողալու Անկէ՛ որ բնաւ թէ պիտի գայ գողի պէս...

13. Կը հետեւի ուրեմն որ այդ ճամբորդութիւնը ժխտողները պարզապէս ժխտած ըլլալու համար կը ժխտեն. իսկ այսպիսի ժխտական ապացոյցը կ'արժէ ոչինչ:

Մեծ միսիթարութիւն է սակայն որ մի քանի առանց ու եւ լուրջ հիման տարակուսողներու դէմ գրեթէ բանակ մը կայ հաստատողներու, նաեւ եւրոպացի քննադատներու մէջ, եւ մերազնեայց մէջ գրեթէ ընդհանրութիւնը. բաւական էր իսկ գերահռչակն եւ հոյակապ այրն Գաթրճեան, որու եզրակացութեանց առ հասարակ կը ձգնակցի նաեւ նշանաւոր քննադատը՝ Տաշեան:

14. Կը հետեւի ուրեմն որ Ս. Գրիգորի մերայ Լուսաւորիչ Հայրապետին Ս. ՏՐԴԱՏԱՅ

Մեծի մեր թագաւորին հետ ի ՀՌՈՄ ՈՒՂԵ-
ԻՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ի տես և յայցելութիւն Մեծի
Քահանայապետին Հռովմայ Ս. Սեղբեստրոսի
և Մեծի ինքնակալին Ս. Կոստանդինոսի,
ՊԱՏՄԱԿԱՆ ՍՏՈԹԳ ԴԷՊՔ ՄԸՆ Է:


*
* *

15. Իրերու և դէպքերու ուժովը, պէտք է
վեր ելլենք՝ դէպի այս ճամբորդութեան շար-
ժառիթ եղող բարձր և հաստատուն Սկզբունքը
Տրդատայ կողմէ՝ րարեկամութեան, մխիթարակ-
ցութեան ի հաւատս և գինակից դաշնակցու-
թեան ի քաղաքականին. բայց նոյն Տրդատայ
և մանաւանդ Ս. Գրիգորի կողմանէ գլխաւո-
րաբար օրինաւոր հպատակութիւն յայտնելու
Ս. Պետրոս Առաքելապետին Յաջորդ և Քրիստո-
սի Փոխանորդ և ընդհանրական և մի միայն
Ուղղափառ Եկեղեցւոյ Դուռն եւ Վարդապետ
հաւատոյ եղող Ս. Քահանայապետին Հռով-
մայ, Ուր եղին զվեմն հաւատոյ հիման Ս. Ե-
կեղեցւոյ (Շրկ.): Մեր առաջին Լուսաւորիչն
եւ Հայրապետը, որ անձամբ սորվեցուց (Ագ.
էջ 343—344) թէ՛ Քրիստոս Տէրն մեր ճշմա-
րիտ վարդապետն, փրկիչ եւ բարերար եւ
Որդի Աստուծոյ եւ Օծեալ՝ իր աշակերտաց
գլուխ դրաւ Պետրոսը. աւար վեմ հաստատու-
թեան ամենայն եկեղեցեաց: Որ գերագոյն
ընթերցող Առաքելոյն զասուց անուանեցեր
լինել գերանելին զՊետրոս՝ գլուխ Ս. Հաւա-
տոյ, հիմն եկեղեցւոյ (Շրկ.): մեր Լուսաւո-
րիչը՝ առաջին եղած է գործնականապէս հաս-
տատելու այս ճշմարտութիւնը թէ՛ պատկա-
հելու համար Եկեղեցւոյ որ ՄԻ Է՝ ՄԷԿ ԳՐԼ-
ԽՈՎ, պէտք է այս Դիւան հպատակ ան-
գամ ըլլալ անրաժան. Ձեռնաւորն որ ի Քրիս-
տոս՝ բնկալեալ ի Ս. Եպիսկոպոսապետէն Հռո-
մայ, յուսաւորեաց զխաւաքային կողմանս
հիւսիսոյ: Հազիւ ուրեմն մտաբերէ մէկը ան-
կէ բաժնուիլ կամ անկէ անկախ գործել,
կտրուած ուռի պէս մահացած է անմիջապէս:
Խնչպէս հաւատք ՄԻ Է, եկեղեցին ալ ՄԻ Է,
եւ աստուածաբանօրէն եւ տրամաբանօրէն՝
անկախ եկեղեցիներ չեն կրնար ըլլալ, չեն
կրնար եռիթաղրուիլ. կ'ըլլան անուանաբար
միայն, կ'ըլլան՝ իրրեւ մարմին մը անկեն-

դան, որ մարդու ձեւն ունի, բայց հոգին՝
ո՛չ: Այս վարդապետութիւնը ճշդիւ գա-
կաւ Սրբոյ Հարց վարդապետութիւնն է: Ս.
Գրիգոր Լուսաւորիչ լաւ գիտէր զայն. իր
մանկութեան սորված էր զայն Կապադով-
կացւոց Եկեղեցւոյն ուղղափառ դաւանութե-
նէն. Նիւսացիներու, Նազիանդացիներու,
Բարսեղներու հոգեշունչ վարդապետութենէն,
որոնք զՊետրոս քարոզեցին Իսխան առաքե-
լոց, Վեմ եկեղեցւոյ, Տէր Բանայեաց. եւ
Պետրոսի յաջորդը՝ զՍր. Քահանայապետ
Հռովմայ, միեւնոյն տիպապատկերով կը յորջո-
ղէին. և իբր առ Գերագոյն Դատաւոր՝ անոր
կը դիմէին իրօք: Գրիգոր Լուսաւորիչ՝ որ ի
Կեսարիա սնաւ, կրթուեցաւ ու ձեռնադրուե-
ցաւ, այս անայլալ հաւատքը քարոզեց ինքն
ալ եւ իրրեւ գանձ աւանդեց Հայոց: Եւ ի
գործնականին սորվեցուց զայն, ըստ Աւետա-
րանի Վէմ անշարժելի ճանչնալով Հռովմայ
Եկեղեցին, Հովուապետ ճանչնալով զայն ո-
րուն ըսուեցաւ՝ ԱՐԱՅԵԱ՝ ԶՈԶԽԱՐՍ ԻՄ,
ամէնը, ամէն տեղ, միշտ, լիակատար իշխա-
նութեամբ: Խոնարհն սրբիւ եւ աներկբայ մօտ
հառ յանձն գնալ... ի Հռոմ եւ առնուլ
ձեռնադրութիւն (Պատրիարքութիւն) ի Սըր-
բոյն Սեղբեստրոսէ (Գր. Տղայ): Ս. Եկե-
ղեցւոյ ու մարդկութեան ի գլխովին պար-
ժանք եղող արեւելեական եւ մեծ հանճարն
Ս. Յովհան Ոսկերբան՝ Բիւզանդիոնի բեմէն
կ'աղաղակէր ի լուր աշխարհի. Հո՛ն, Հռով-
մայեցւոց արեւմտական փաղափն մեջ, քա-
ղաւորներ, հիւպատոսներ, զօրագլուխներ ա-
մեն բան բողբոլ, կը վազեն ձկնուսի մը ու
խորանակարի մը գերեզմաններուն: Նքէ ես
ալ ազատ ըլլալի եկեղեցական հոգերէ, ու
մարմինս ալ առույց ու զօրաւոր ըլլալ, ա-
պաքեն չպիտի հրաժարէի այսպիսի նամբո-
ղութիւն մը բնելի, տեսնելու համար միայն
եղբայրներ ու բանձն ուրուն մեջ կապուեցան:
Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետն մեր ի-
րօք կատարեց այդ ճամբորդութիւնը, և սոր-
վեցուց այս վարդապետութիւնը, հաստա-
տուն և անյիւղի. Պետրոս և իր յաջորդներն
են Դուռն Ս. Եկեղեցւոյ, Գերագոյն Հովիւ
և Դատաւոր եւ Վարդապետ ամէն Եկեղեցի-
ներու, հովիւներու և ոչխարներու:

Եկեղեցական պատմութիւնը վկայեց Գրի-
գորի իմաստութեանը, Հարք և Հայրապետք,
համօրէն Պատրիարքունք ամէն դարերու մէջ,
Եպիսկոպոսունք, Կայսերք, ազգք և ազինք
ճանչցան ու հպատակեցան աստուածախօս
վճռին, Գրիստոսի անփոփոխելի պատգամին,
Կեցած է եկեղեցական Պատմութիւնը, Կո-
թող յաւերժական, Սիւն լուսոյ և ճշմար-
տութեան, Հին փոշոտած մագաղաթները խօ-
սեցան, հին մասնաւորները, սեւաթոյր ցեցա-
կեր պապիրոսները աղաղակեցին. հողը պատ-
ուեցաւ և անդունդները գոչեցին մեծաձայն՝
իրենց դուրս ժայթքած հնութիւններով,
պեղում գեանադամաններու նկուղներով եւ
ասարկաներով, յարեւելս եւ յարեւմուտս,
յԱսիա եւ յԱֆրիկէ եւ մինչեւ ի ծագս աշ-
խարհի: Ահա՛ եւ այսօր յանձին Պիոսի Ժ.ի
ԽՕՍԻ ՊԵՏՐՈՍ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի
դէս իս, այն պանծալոյն ճշմարիտ եւ հա-
րազատ որդիքը՝ Հայ Ուղղափառ Հայրա-
պետներ, կղերք եւ ժողովուրդ, տանուվեց
դարերէ ի վեր անկեղծաւոր հաւատքով, ան-
սասանելի վատահութեամբ, անդրդուելի յա-
րումով, անվանելի հաստատութեամբ եւ
աքսորանաց, բանտերու, հալածանաց ու
մահուան գնով, Հոռմայ եւ Երկնից ճամբուն
վրայ աղաղակեցին մեծաձայն,

Եւ դու՛ Հոռ'ն, մայր քաղաքաց,
Դերապայծառ եւ Պատուելի,
Մեծիկ Արտուր Պետրոսի՝
Առաջնոց Գլխաւորի,
Եկեղեցիոյ անշարժելի,
Ի Կեդիայեան շինեալ վիմի,
Դրանց դժոխոց անյաղքելի,
Եւ կնիք երկնիցդ Բացողի:



ԵՐ. ՏԵՐ ԿՈՍԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ս. Ս. Ն.

յեթին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան
որ ընդ միմեանս վասն Գարողիկոսեան, եւ յա-
ղագս որոյ յայտնելոյ ումեմն երկրորդ շուաւորից
կոչեցելոյ յովանց, եւ վասն նորին գործոց եւ
վարուցն, եւ վասն համախոնից նորին:

(Շար.)

Յետ այնորիկ Եփրեմ վարդապետն այն
բանադրեաց զերիս քահանայս յԵտրէնէ, և
կտրեաց յԵկեղեցւոյ և յիրաւանց ժողովրդ-
եանն. և ապա ազգ արար Իստամպուլու
Փաթրիկին, զի և նա եւս բանադրեցէ զնո-
սա, որ և արարն իսկ վասն կաշառաց և
տուգանելոյ զնոսա: Վասն որոյ բանադրեց-
եալ քահանայքն եկին յԻստամպուլ՝ առ Պատ-
րիարքն և մնացին անդ զաւուրս բողոքմա-
ղեղերելով ի դրունս նորա, և հազիւ հաճեալ
զկամս Փաթրիկին ի ձեռն միջնորդաց և կա-
շառաց: Իսկ նոյն Փաթրիկն Մէլքսէթ վար-
դապետ, որ կոչուին Սուփհի¹, յետ հաճելոյ
կամացն իւր կաշառօք՝ ասաց քահանայիցն,
գնացէ՛ք դուք յԵտրէնէ ցամաքով, և ես՝ ծո-
վով զամ և ժամանեմ ձեզ անդր, և առաք-
եաց զնոսա, և ինքն ելեալ նաւով՝ եհաս
ի Թէքիրտաղի, և անդ յամեալ մնաց զաւուրս
ինչ: Բայց քահանայքն զաւուրս վեց հասին
յԵտրէնէ, և սպասէին զալստեան Փաթրիկին:
Իրիւ ետես Եփրեմ վարդապետն զի եկեալ են
քահանայքն և ծանեաւ զի ի գալ Փաթրիկին
յԵկեղեցի մոանելոյ են նոքա՝ յայնժամ զըր-
գոեաց զքահանայսն, զիշխանս և զժողո-
վուրդս Ետրէնու. և ետուն զքահանայսն
ըմբռնել, և տարան առ վէզիրն. և բողոք
բարձեալ զնոցանէ՝ ամբաստանեցին առ բոլ-
նաւորն ասելով թէ՝ սոքա են որք զհաւատա-
մեր թողեալ և Ֆոանիկ են եղեալ, և զայլս

¹ Մէլքիսեդեկ «Սուպհի Շայխ», որ երկու անգամ
պատրիարք եղաւ. տ. 1698—1699. —բ. 1700—1701:
Ասոր յիշատակութիւնը անցած է Եր. Տ. Կոմիտասոյ
վարքին մէջ:

հրաւիրեն ի մոլորութիւնս իւրեանց և դարձուցանեն զնոսա : Եւ այլք ոմանք վկայեցին թէ ճշմարիտ այդ այդպէս է : Եւ հրամայեաց Վէզիրն առաքել զնոսա քիւրէկ , և բերեալ յիստամպօլ ի սօնի գիւտ նշխարաց սըրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի կիրակին , և եղին զնոսա ի թէրսխանան , արկեալ զոտս նոցա ի շղթայս : Եւ իբրեւ ել Մէլքսէթ Փաթրիկն յետրէնէ , և ջանայր զի ազատեացէ զերիցունս անտի , և բազում անգամ ընդ ժողովուրդսն խօսելով երբեմն սպառնալեօք կամէր ազատել զնոսա : Եւ նոքա յամբոխ արարեալ հանդերձ Եփրէմ վարդապետիւն , մանաւանդ ոմանք հիւսանք Գնտարացիք պանդուխտք ընդ նոսա որ արոճեստիւք են անաչէնք , և այժմ երեւեցան տնաւերք : Վասն որոյ զՄէլքսէթ Փաթրիկն յետ երկուց ամուս կամ աւելի , ետուն առաքել զնա եւս ի քիւրէկ :

Եւ արդ այսու պատճառաւ եկին և լցան ի կ . Պոլիս և յետրէնէ սեւազլուխք ոմանք , որք նորեղուկք և աննշանք , ազմարարք և զրդօրիչք , և այն՝ վասն լցուցանելոյ զյորովայնս իւրեանց որպէս օրէն է ի վերայ ծովու . զի մինչ ծովն ի խաղաղութիւն և յանդորրութիւն կայ՝ ոչ երբէք երեւին թռչունքն ջրայինք որ լողան ի ջուրս , և կոչին ծղնիք , և այլազգաբար մարթի ¹ : Բայց յորժամ տեսանեն զի յօդն խառնակի և հողմունքն սաստկանան և լինի չփոխումն և մրրիկ , և այնու իմանան որ ալեկ(ոճ)ութիւն լինի ի ծովս և նաւք ընկղմին : Յայնժամ ուր և իցին ի ծակս և ի ծերպս ընակեալք , ապա սրտոյ հասանեն առ ալեկոճեալ նաւսն և սպասեն զի ընկղմնայի . և իբրեւ ընկղմի վաղվաղակի ելանեն ի վերայ մարդկան եւ նախ զաչսն փորեն եւ ապա զմարմինն զըզզեն և ուտեն , քանզի են զիշակերք . ամին նման ոմանք սեւազլուխք ժամանակիս իբրեւ լուան զաղմուկ և զխողովութիւն կողմանցն Ռուսէլու՝ վաղվաղակի հասին առ նոսա եւ օգնական եղեալ խողովութեանցն , եւ սկսան

¹ Այս գիշակեր թռչուններն ծանօթ են ի կ . Պոլիս՝ ծովու վրայ իրենց երամախառն արշաւանքներովը : Նմանութեան նկարագրութիւնը գրական արեւմտաբէ գրուկ չէ :

նախ զաչսն հանել նոցա , այսինքն զհոգեւոր աչսն որ է հաւատն մեր , լեզուապարելով լրբութեամբ զհաւատն Բրիտտոսի , այլեւայլս բարբառնջելով , եւ իբրեւ խաւարեցուցին ըզնոսա ի նմանէ եւ ապա զժողովս արարեալ զըրամս ժողովեալ յագեցուցանէին զյորովայնս իւրեանց ի մոյս եւ յարենէ ժողովրդեանն , եւ պարծէին իբրեւ վրէժխնդիր լեալք նախնական եւ հայկական աւանդութեանցն ¹ : Ասելով թէ այս եկեղեցիս ի բազում ժամանակս «ՄՎ հրաւալիս» ի լման ոչ է երգեցեալ ի ձեռն կաթուղիկէից , վասն որոյ եւ այժմ երգեսցուք , իբր թէ ով հրաւալի ասելով զօրէնս հաստատէին յաչս տգէտ ուսմկին , եւ այն անպատշաճ յաւուրսն յատեան ելեալ հանդէս արարեալ , պար առեալ զխորանն Ս . Վարազուրաւ ծածկեալ , մեծաւ բառաչմամբ կանչկանջելով զնզովս կարգային :

Արդ , ա՛յս է միթէ զՍբ . Լուսաւորչի զօրէնսն հաստատելն , եւ ոչ զիտեմ : Արդ այսու հնարիւք առաւել եւս զմիամիտ ուսմկան վրդովեցին , որք սկսան խաժատել զմիմիանս եւ ի հետ յայսմ խողովութիւնս բազումք ի քահանայից եւ ի ժողովրդականաց խտտորեցան : ասլընը պիլմէզ կիտէլէր , ջանաք չէօմլէք թաշըմաղա պաշխատըլար , վէ տիւկիւն էվըն պիլէ պիլմէզ :

Յետ այսորիկ ի կոստանդնուպոլիս մեծահանդէս սիւնհոդոս արարին յԱստուածածին եկեղեցւոյ , և յատեան կոչէին զարան զայնոսիկ զորոց կարծէին գաթուղիկ լեալ , եւ բազումք վասն նախանձու տանէին բռնութեամբ զթշնամիս իւրեանց յատեան , եւ հարցափորձ լինէին զնոցանէ ասելով , նզովե՛ս զՀռոմայ եկեղեցին . եւ զհայրապետս նորին : Դարձեալ թէ նզովե՛ս զերկու բնութիւն ասացողսն ի Բրիտտոս , որ մէկ բնութիւն է բանին մարմնոյն : Դարձեալ թէ ահարպե՛ս զայլոց ազգաց Բրիտտոնէից եկեղեցին , զի ուրացողք են նոքա , որպէս երգեմք ի մէջ Ով հրաւալելոյն թէ ուրացան զՏէրն ի Բաղկեղոնի համայնգամայն ազգք , և միայն

¹ Պատմութիւնը գէպքերու և գաղափարներու կրկնութիւն է , կ'ըսեն : Նոր բան մը չկայ արեւու տակ :

Հայք մնացին Քրիստոսեայ: Եւ ստիպէին թէ
 'նզովեցէ՛ք զնոսա եւ զԺողովն Քաղկեդոնի,
 եւ դաւանեա Սր. զԴէոսկորոս զՄեծ վկայն: Եւ
 այլօք բազմօք բանիւք գայթակղեցուցա-
 նէին զպարզամիտսն, եւ ի կարծիս ձգէին
 զնոսա: Լուայ եւ յոմանց մեծ եւ իմաստուն
 վարդապետաց՝ որք տեղեակք էին հնոց եւ
 նորոց գրեանց յԱստուածարանութեան եւ
 բանիբուն: Նոքա ասացին թէ՝ ոչ ուրեք
 տեսաք զվկայութիւն Դիոսկորոսի, քանզի,
 վկայ վասն այն ասեմք եթէ ունիցեն զվար-
 դապետութիւն եւ զգիրքս, եւ կամ վասն
 Քրիստոսի վկայեալ իցեն եւ մարտիրոսաց-
 եպօք: Բայց վասն Դիոսկորեայ զոր, ասեն
 մեծ վկայ, ոչ զվարդապետական գիրքն տե-
 սաք եւ ոչ զմարտիրոսանալն գիտեմք: Ապա
 ո՛ր մնաց ռամկիւն, եւ զի՞նչ գիտէ աշխար-
 հականն եւ խառնիճադանճն, զթերութիւն
 եւ զճշմարտութիւն Քաղկեդոնի Ժողովոյն,
 եւ զմեծ վկայութիւնն Դէոսկորոսի: Թողում
 ասել զբազում քահանայս, նախ զվարդա-
 պետս ոմանս, որք ոչ գիտեն թէ ո՛ր եղև
 Ժողովն Քաղկեդոնի, եւ կամ վասն որո՞յ Ժո-
 ղովեցան Սր. Հայրապետքն յիւրաքանչիւր
 ժամանակս եւ սիւնհոգոս արարին. եւ թէ
 զի՞նչ են սահմանքն սրբոյ Ժողովոյն Նիկիոյ.
 Կ. Պօլսոյ, եւ Սիւստոսի, եւ ապա Քաղկե-
 դոնի: Ապա դու, ո՛վ վարդապետ եւ քա-
 հանայ իմաստուն, երբ որ չես գիտեր, ընդէ՛ր
 զայլն հարցանելով գայթակղեցուցիչ լինիս
 անգիտին եւ ի կարծիս ձգես զնա: Դու որ
 պարծիս կարդացող գոլ եւ ոչ գիտես, ապա
 ընդէ՛ր հարցանես զայնոսիկ որք առանց զբա-
 րութեան են եւ տգէտ քան զքեզ: Վասն
 այսորիկ ի կարծիս մնացեալ յոմանց որք
 յատաճագոյն ո՛չ էին լուեալ զայնպիսի իրս,
 ապա գիմեալ եւ զեպերեալ նոքա ատո եւ
 անդ, ի յոյնս եւ ի լաթիկս, եւ հետաքրքիր
 լինելով հարցանէին զնոսա թէ՛ ընդէ՛ր ոչ
 ընդունին ազգն մեր զԺողովն Քաղկեդոնի,
 եւ զի՞նչ իցէ մեա նորին, եւ ընդէ՛ր մեք
 ասեմք մէկ բնութիւն Քրիստոսի եւ զուք
 ասէք երկու բնութիւն, արդ զի՞նչ իցէ
 պատճառն սոցա: Եւ նոցա պատասխանեալ
 թէ այս այսպէս է եւ այն այնպէս, եւ թէ

սա է ճշմարտութիւն, եւ նա ոչ: Տեսե՛ր
 արդեօք եղբայր որք ինքեանք պատճառ ե-
 ղեն, եւ յայտ յամենայնի լուեալ ձայնքն ի
 Հայոց եւ տեղեկացեալք զնզովումն Քաղկե-
 դոնի եւ զուրացող կոչիւն ազգին մերոյ զնո-
 սա, եւ զնզովումն Փափիս Լեւոնի, որ ազգն
 Յունաց զնա Սր. կոչե՞նք, եւ զյիշատակ կա-
 տարեն փետրուար ամսոյ ութեւտասին, թո՛ղ
 զԹաղմատան: Նաեւ զմէկ բնութիւն ասելն
 ի Քրիստոս յազգիս Հայոց, եւ այնու առա-
 ւել եւս գայթակղեցան յոյժ քան զվաղեմի
 ժամանակսն, եւ վերստին նորոգեցին ի
 վերայ ազգիս մերոյ զԱրիոսական անուն, եւ
 Եւտիքոսական կոչել զմեզ: Եւ ոմանք ի
 քահանայից մերոց տգիտաց, որ միայն ան-
 ուամբ եւեթ կոչին քահանայք, եւ ոչ ծա-
 նօթ իսկ քահանայութեանն անուան, հար-
 ցանեն ի ժամ խոստովանութեան զխոստո-
 վանորդիս իւրեանց ասելով թէ՛ դու մէկ
 բնութիւն կ'ասես Քրիստոսի թէ երկու: Արդ
 առ այս զի՞նչ ասացուք եղբարք, ո՛հ տգի-
 տութիւնս եւ յիմարութիւնս, զի ինքեանք
 ոչ գիտելով ամենեւին թէ զի՞նչ է սահման
 բնութեան, եւ թէ զի՞նչ է բնութիւն, զի՞նչ
 է մասնաւոր բնութիւն, եւ թէ զի՞նչ է կա-
 տարեալ բնութիւն, զի՞նչ է գոյութիւն, կամ
 զի՞նչ է էութիւն, զի՞նչ է ենթակայութիւն,
 զի՞նչ է անձն կամ զի՞նչ է անձնաւորութիւն
 զի՞նչ է միութիւն կամ զի՞նչ է միաւորու-
 թիւն: Արդ սոցա ամենեցունց անձանօթ
 գոլով ինքեանք վասն որոյ զաշխարհականսն
 հարցանեն, եւ գայթակղութիւնս արկանեն
 ի մէջ հաւատացելոց, եւ այս է պատճառն
 ստուգիւ, զի այնու կամին զփառս եւ զա-
 նուն ստանալ թէ սոքա ճշմարիտ հայք են,
 եւ հատուտ ի վերայ հայկականի աւանդու-
 թեանց: Արպէս ասէ Տէրն ի դէմս սոցա. թէ
 «զուք զփառս ի միմեանց անուք, եւ ըզ-
 փառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ ինքրէք»:
 (Շարունակելի)

Ս. Այս պարբերութեան իսկ յաւ կ'իմացուի թէ
 Տ. Կոմիտաս քաջահմուտ էր Ս. Թովմատի փիլիսոփա-
 յութեան եւ աստուածորանութեան, անոր խորա-
 խորհուրդ նրբութիւններուն եւ բնադանցական ճիշ-
 դութիւններուն: Յիշուի զարմանալի է այսքան զբաղի-
 տութիւն, հմտութիւն եւ գիտութիւն միացած տեւ-
 նել այն ժամանակե պարզ տեղեկի մը վրայ, որ իր
 վկայական ուրեան փոյլովն անմահացուց այս չքնաղ
 առաւելութիւնները: Wasisi Aghnoudj է mus:

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻԵՒԻՍԱՍՏՐԵՐՆ ՅԱԳԻՐԻ

1830 թարիխինստէ, Լիօնն Սուրբ Յովհաննէս նամ Աթոռանիստ քիլիսաւորնոսա զէվալլը պիր ինթիյար ֆագիր վար իտի քի, քէմալը միւսաւլէմէթլէ ժամնրգութիւնլարտա հաղըր պուլունուրաը վէ հիւանի ճէմալ սահրպի կէնճ պիր կանոնիկոս հէր տէֆաւընտա պու ինթիյար ֆագիրէ պիր տատագա վէրիր իտի: Մէղքիւր կանոնիկոս հէր սատագա վէրմէսինտէ պաղը բուհանի նասիհաթլար տա վէրտիլինտէն, տրթըզ պու քահանայ վէ պու ինթիյար պատիմ տօսթ կիպի օլմուշլարաը:

Պիր կիւն հէր նասըլտա, միւթաը օլան սատիտա քիլիսայա կիթմէտիլինտէն, հէրի աչըզ պալար: չիւնքի ուզուն միւստէթտէն պէրի քէնտիլինի ախը մահալտէ կէօրմէյէ սլըճմիշ օլտուզլարընտան, սայյր տիլհնճիլէր զանն իտէրլէրաի քի ինթիյարն օրատա պիր հազըր թէսարբուֆը վար սըր, պինաէն ալէյէ տէ քիմս, պու խուսուտա օնա պիր ինթիրագտա պուլունմաղտը: Արթըզ կանոնիկոս ինթիյարը պիր տահա Աթոռանիստ քիկոս ինթիյարը պիր տահա Աթոռանիստ քիլիսանըն գարուսընտա կէօրմէզ օլտու: Աճէպա պու զայպուպէթին հիքմէթի նէ իտի, պաշգա պիր քիլիսա գարուսընա մը կիթմիլտի, կախօտ խաթիմ մը իտի քի կէլմէյօրաը տիյէ էնտիլէ իտէր իտի: Իքինճի ֆարըը սլլէպի ինթիմալտէն օլտըզընտան, տօսթուհըն իզամէթկեանընըն նէրէտէ օլտըզընը էօյրէնէրէք նէզալինէ կիթաի:

Ինթիյար, հալտ պու կիւն պիլէ Լիօնըն էսկի մահալլէլէրինտէ չօզ պուլունուրըը իւզրէ, Ս. Յովհաննէս քիլիսաւորնոսա պիր աղ ուզագտա, գարանլըզ կէչիալէր իչէրիսինտէ վազը պիր էվտէ իզամէթ իթմէքտէ իտի: Կանոնիկոս պու մուզլիմ մէտիւնէլտէն իչէրի կիրէրէք, միբուրը զէմանլա քիւհնէլէնմիշ պիր նէրտիւպանտան չրզըզ զահիրի հալի կէօսթէրիչի օլմայան պիր գարու էօնիւնտէ տուրտու: Էլիլէ իւշ տէֆա գարույա վուրտու: Իչէրիտէն պօղունուզ պիր թէհասիւր նիտասը կիպի ինճէ վէ ուզուն վէ սայքի սէօնմիւշ օլան պիր սէս իշիտիլտի:

Գարույը աչըզ իչէրի կիրտիլինտէ, քահանայ, գարանլըզճա, ֆագաթ զայէթ զըյմէթտար իրէքլի սէրկիլէրլէ թէֆրիշ իտիմիշ վէ ֆէվզէլտաէ նէֆիս էչեալարլա թէզին օլունմուշ պիր աբարթըման գարչըսընտա պուլունտը: Պիր քէօլէտէ, պիր բարչա սաման իւզէրինտէ ինթիյար պիր իտաթա եաթըյօրաը քի, Ս. Էովհաննէս քիլիսաւորնոս ֆագիրի իտի: Հէր նէ գատար տա խաթիմալըզ սէպէպիլլէ զայիֆլէնմիշ իտի իտէ տէ, եինէ կանոնիկոս սուհուլէթլէ օնը թանրյապիլտի: Էլինի թութարազ նապընա պապըր վէ զայէթ զայիֆ պուլտուղընտան, հէման վապըթ զայ իթմէքաիլլին օնըն ճանընըն սէլամէթինէ տաիր սէօլէ կիրիլտի, վէ էյի պիր խոստովանաք վասըթաը իլէ վիճաանընը թէմիլլէմէյէ օնա նասիհաթ վէրաի:

Ինթիյար խաթիմ, քէմալը սիւքիւթլէ օնը տիւնէտիքալէն սօնրա, նապէհա տէրին պիր ահ չէքէրէք ատէթա պիր իւմիս քէսիքիլի իլէ կանոնիկոս տէօնիւպ «Վարդապետ, կէօլէրտէ, կիւհանըն ճէզապընը վէրէն աթիլ պիր Ալլահըն վարըզընա ինանըրմըսընըզ» տէտի, վէ թէքար կաթաղընըն իւզէրինէ տիւշտի:

Քահանայ թէհաճիւպլէ օնա պագտը վէ օրատա կէօրտիլիւ միւքէլլէֆ էչեանըն հիքմէթինի սայքի քէչֆ իթտի:

— Էվվէթ, ազիլիմ, սէմատա զայէթ աթիլ պիր Ալլահ վար տըր, ֆագաթ պու Ալլահ աթիլ օլմաուլլա պէրապէր, զայէթ մէրհամէթլի պիր պագա տըր քի թէօվպէյէ կէլէն կիւհանքեարա տայիմա ալֆ իտէր:

— Վարդապետ, պանա ալֆըզտան պահա իթմէ, օ պէնիմ իչիւն միւմքին աէյիլ տիր:

— Ալլահ բահիմ տիր, չէօլլէ քի պիլիմ գապահաթլարըմըզ հէր նէ գատար չօզ վէ հէր նէ գատար տա աղըր օլուրտա օլտուն, թէօվպէ իտէճէք օլուրտագ, հէբալինի ալֆ իտէր, հէր չէյի ունուտըր:

— Խալըր, խալըր, վարդապետ, պէնիմ կիւհանըմ գաթիլէն աֆիլ օլունմայաճագ տըր: Հայաթըմըն հիքեայէսինի, կիւհանըմըն հիքեայէսինի տիւնէյլին, իչթէ օ վազըթ, շուհալիր կաթաղըմը ինաթա իտէն միւքէլլէֆ

էշեալարքն հիքմէթինի անլայաճագընըզ : Պէնիմ պու սլ ֆալէթիմին պիր քէֆարէթ օլ-տուղընը կէօրէճէքսինիզ : Ֆազաթ Ալլահին ատալէթի միւսաատէ իթմէզ քի պանա ալֆ էյլէսին , կիւնահըմը ունուլթսուն :

Պունըն իւզէրինէ , կանոնիկոս պիր իս-քէմլէ ալարազ քէմալը տիգգաթլա իթթիյա-րը տինլէմէյէ պաշլատը :

— «Ազ սօնրա ելթմիշ եաշայաճաղըմ , վէ իշթէ գըրզ սէնէյի գարիպ պիր գէման-տան պէրի տիր քի պէն պու տէլիքատէ եա-շայօրըմ : Պիր ռաթօ սայէսի ալթընտա տիւն-եայա կէլմիշ օլուպ , բէսէրիմ կիպի պէն տէ զայէթ էյի գալպի , մէրհամէթլի պիր էֆէն-տիյէ խըտմէթ իթմիշիմ : Հէր շէյիմի , պէնի ֆէվզէլատէ սէվէն վէ հազգըմտա հէր տիւր-լիւ ասարը էմնիյէթ իպրազ էյլէյէն օ ալի-ճէնապ գօնթա մէտեոունըմ :»

«Օնուն էհլի ֆազլիլէթ գէվճէսի , տէյէ-պիլիրիմ քի օ հէվալի իշիւն ատէթա պիր նիյմէթի իլահիյէ իտի : Զէվճ ու գէվճէ խա-յըրխահըզլարը վէ խօշ մուսամէլէլէրիյէ հէր քէսին գալ-պինի քէնտիլէրինէ պէնտ էյլէմիշ-լէր իտի : Հէր քէս օնլարը ատէթա պիր բէ-տէր վէ վալիտէ կիպի սէվէր վէ մա էլ մէմ-նունիյէ օնլար իշիւն ֆէտայը նէֆստէն չէ-քինմէզ իտի :

«Իշթէ բէվօլիւսիօն պիւթիւն չէամէթիյ-լէ կէլտի վէ օ վազթըն նէ գատար մէշոււմ օլտուղընը թապիի քիթապլարտան անլամըշ օլաճագընըզ : Ֆազաթ պէն օ էլիմ կիւնէրի կէօրմիշ օլտուղըմտան , զիքթինի իթտիյիմ վազրթ պիլէ պիլա իթթիյար թիթրէյօրըմ : Պիւսա՞ն ալէյհ , բէվօլիւսիօնըն կէլմէսինտէ , հէր թարաֆատ էշրաֆ սիւրիւլտիւլէր :»

«Պիլիմ գօնթ հէր քէս թարաֆընտան սէվիլմիշ օլտուղընտան , քէնտի թօքրաղըն-տան ալշարը չըգմագըղըն , պիր գաշ ալ պիր չիֆթլիկ տախիլինտէ կիզլէնէպիլտի վէ ասուտէ հալտէ հաշատը : Ֆազաթ պիր կիւն ասքէրլէր չիֆթլիյի գուշաթտըլար : Պիր խա-յին , օնլարը գամազլամըշտը , պիր զամնազ , քէնտի խալլըրիսահլարընը , էյալէթին խալլըր-խահլարընը էլէ վէրտի : Վարդապետ , օ խա-յին իշթէ պէն իմ . . . :»

Պու կիպի պիր իգրար իւզէրինէ վարդա-պետ տէնշէթտէ գալարազ պիր ահ չէքտի :

— «Գօնթ պիւթիւն քէնտի ալիլէսիլէ պէրապէր մահպուս իտիլտի վէ սօնրա բէվօ-լիւսիօն մահքէմէլէրինին պիրինտէ մուհա-քէմէ օլունար : Ֆազաթ օնլարա գարշը հիշ պիր շիքեայէթ հօգտը . հիշ պիր քիմնէ օն-լարա էն խաֆիֆ պիր գապահաթ պիլէ իս-նոտ էտէմէզաի : Ումոււմըն շէհատէթի շու եօլտա իտի քի , գօնթ վէ քէնտի ալիլէսի հէր քէսէ էյիլիք եարմըշ տըրլար վէ օ հէ-վալիտէ ալթուն իլէ պէրապէր խալլըրիսահլըզ նէշը իթմիշ տիրլէր . . . : Պէլքի օնլարըն թախ-լիյէյի սէպիլլէրի իճրա օլունուրարը վէ սէր-պէսթ պրազըլըրլարտը , իշթէ պիր եալանճը չահիտ հուզուրը հաքիմէ տախիլ օլտու . . . : Պու եալանճը չահիտ հուզուրընըզտա տուր-մուշ տըր , վարդապետ :

(Մապուսի վար)

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻԻՆ ՌԱՍԻՆԻ

Թարգմանեց

ԽԱՅԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՆ ԵՍԹԵՐԻ

Եսթեր ներկայացուեցաւ 1684ին , Սեկ Սիւռի մէջ , թոշակաւոր օրիորդաց կողմէ նոյն անուանի ուսումնարանին , զոր քանի մը տարի առաջ հիմնած էր Մէնդընն Տիկինը՝ ազնիւ և չքաւոր օրիորդներու դաստիարա-կութեան համար : Ռասինի յառաջորանէն կը տեսնուի որ Եսթեր յօրինուեցաւ խնդրանքով տիկին Մէնդըննի , որ Սեկ Սիւռի ուսումնա-կան ծրագրին մէջ մուծած էր թատերական հրահանգներ՝ ուսանողութեան յիշողութիւնը զարդարելու , ձայնը մարզելու և շարժուձե-ւերը կերպաւորելու նպատակաւ : Նախ ներ-կայացուած էին Վարչուհի Տիկին Պոլինոնի

արձակ թատերախաղերը, որոնք շատ չանցած՝ աւելի բարոյախօսական քան շոհագրական տեսնուելով, մէկ դի ձգուեցան, և ներկայացուեցաւ Անտուանք. բայց ուսանողուհիք չափէն աւելի խանդավառութիւն ու գուարճութիւն զգացին անկէ. և Տիկին Մէնդլնոն, անոր յաջողութեան մէջն իսկ ընդհանարեց վտանգ մը որմէ խիղճը վրդովեցաւ. Այս դժուարին կացութենէն ելլելու համար դիմեց Ռասինի և խնդրեց որ Ս. Գրքէն առնուած նիւթի մը վրայ առանց սիրոյ պրակի ողբերգութիւն մը յօրինէ. Այս խնդրանքը հրաման մըն էր. Ռասին որ տասուերկու տարիէ ի վեր թատրոնէ հեռացեր էր, աւելի բարեպաշտութենէ դրդուած քան իր վերջին աշխարհային գլուխ-գործոցին, Ֆեսը ողբերգութեան յարուցած դաւադրութեան դէմ զգացած զայրոյթէն, չերկմտեցաւ դարձեալ ձեռնամուխ ըլլալու թատերական բանաստեղծութեան, երբ տեսաւ թէ կրնայ զայն գործածել ի սպաս կրօնի:

Ռասին հաւատարմաբար հետեւած է Նաթերի գրքին պատմութեան, և հետեւեալ կերպով կարգադրեր է իր ողբերգութեան երեք արարուածները լեցնող գէպերը:

Ա. Արարուած. — Նաթեր կը պատմէ իր մանկութեան մէկ բարեկամուհիին, էլիզա նունով հրեայ օրիորդի մը, զոր փնտռել կուտար ամբողջ վեց ամիսէ ի վեր, և որ զինքը մնում կը համարէր սուտ զրոյցի մը համեմատ, թէ ինչպիսի նախախնամական միջոցներով եղաւ, սէգ Ասթինէի շնորհազրկութենէն յետոյ, ամուսին Պարսից Արտաշէս թագաւորին, որ զինքը ընտրեց հազարաւոր մրցակից օրիորդներու մէջէն. Այս իշխանը կ'անգիտանայ անոր ծագումը և ազգը, զոր ան խնամով ծածկեր է իմաստուն Մուրթքէի իր հօրեղբօր և խնամակալին խորհուրդով: Նաթեր իր բարեկամուհիին կը յայտնէ իր բարձր աստիճանին մէջ զգացած ցաւերն ու երկիւղները, Հաւատարիմ՝ Աբրահամի Աստուծոյն, կը հեծէ տեսնելով Հրեաները գերութեան մատնուած և Երուսաղէմ պիղծ սուղուններու որջ եղած: Իր հեռաւոր հայրենիքին պատկերով մխիթարուելու համար,

շուրջը ժողոված է Իսրայելացի օրիորդաց խումբ մը, որոնց ինքը անձամբ կը սորվեցնէ Աստուծոյ օրէնքը. Այս գեղատի աղջիկները, որ երգչախումբը կը կազմեն, իր քովը կուգան նուիրական երգեր երգելու. Բայց Մուրթքէ սպրդեր մտեր է պալատը. կուգայ զեկուցանելու Նաթերի, որ իրին անտեղեակ է, թէ Արտաշէս իր սիրական Համանէն, ամբարիշտ Ամաղեկացիէն զրդուած վճուեր է մահուան մատնել պետութեան մէջ քանուող բոլոր Հրեաները: Կոտորածը անդի պիտի ունենայ տասը օրէն. միայն Նաթեր կրնայ փոքր առջեւը առնուլ, իր կեանքը վտանգի մէջ դնելով: Այս սարսափելի գեկոյցէն յետոյ, թագուհին, վսեմ աղօթքով մը, սիրտը առ Աստուած կը բարձրացնէ և կը պաղատի կը խնդրէ թոյլ չալա որ անհաւատները փրճացնեն հաւատքը իր պատգամներուն որոնք Հրէից «մշտատեւ սերունդ մը» կը խոստանան: Կը հայցէ Անկէ՝ Արտաշէսի առջեւը ելլելու համարձակութիւն, և կ'աղաչէ որ այդ իշխանին բարկութիւնը ամօքէ ի նպաստ իր ժողովուրդին: Իսրայելացի մատաղ օրիորդները կը հնչեցնեն այն ատեն յայտնու երկիւղով խառնուած սրտառուչ երգ մը:

Բ. Արարուած. — Արհաւրոտ երազ մը խռովելու է թագաւորին քունը, որ հանդարտելու համար, տքնութեան միջոցին, իր թագաւորութեան տարեգիրները կարգաւ տուեր է. Հիդաուպ անունով զրանիկ մը, Համանին լրտեսը, կուգայ այս մասին անոր տեղեկութիւն կուտայ. Որուն փոխարէն Համան Հիդաուպի կը յայտնէ այն խռովութիւնը որ զինքը կ'անհանգստէ և իր երջանկութիւնը կ'եղծանէ: Պատիւներու կատարն հասած, անուելի վիշտ կը զգայ տեսնելով Մուրթքէի ընդգրկմութիւնը, որ, հակառակ ամենուն օրինակին, յանձն չ'առնուր ծնրադրել իր առջեւ: Քանի որ այդ ամբարտաւանը ողջ է, իր հոգին երբէք հանգիստ պիտի չգտնէ, և զեռ տասը օր սպասել պէտք է որպէս զի Հրէից ընդհանուր ջարդը՝ ազատէ զինքը այն մի միայն թշնամիէն զոր կ'ուզէ հարուածել. որովհետեւ ամբողջ ժողովուրդի մը չքացումին մէջ իր հետապնդած նպատակը յաւէտ

Մուրթքէի մահն է՝ Համան, որ միտքէն իսկ չ'անցընէր թէ գիշերուան ընթերցումը Արտաշէսի յիշեցուցեր է անոր Մուրթքէի ձեռքով ազատուած ըլլալը, կը կարծէ թէ զինքը կ'ուզէ վարձատրել թաղաւորը, որ իրեն խորհուրդ կը հարցնէ թէ՝ երախտագէտ ինքնակալ մը իր մէկ հաւատարիմ հպատակին ինչ պատիւներ կրնայ տալ: Ուստի կ'առաջարկէ հրապարակական յաղթանակ մը, ուր հանդէսին զիւցազնը, թագաւորական պատուոյ զգեստն ու նշանները վրան առած, և թագաւորական երկվարի մը վրայ հեծած մայրաքաղաքին փողոցները պտտի եւ պալատական պաշտօնեայ մը անոր առջեւէն քալէ: Այս խորհուրդը շատ հաճոյ կ'ըլլայ Արտաշէսի որ անմիջապէս նոյն իսկ Համանին կը յաճնէ՝ Մուրթքէն յաղթանակաւ պատգնել Ծօշի մէջ: Այս Համանը սալահար եւ ամօթահար ընող հրամանը տրուելէն անմիջապէս վերջը, Եսթեր, առանց կոշուած ըլլալու, կ'ելլէ թագաւորին առջեւ եւ մէկէն կը մարի կ'իյնայ. բայց Արտաշէսի ձայնէն կ'ոգեւորուի եւ կը հպի ոսկի մականին որ իրեն կ'երկարի ի նշան ներման: Այն ատեն կը խնդրէ որ թագաւորը հաճի պատուել իր սեղանը եւ թոյլ տայ որ Համան ալ հետը գայ: Եսթեր անոր առջեւ պիտի խօսի եւ յայտնէ այն գաղտնիքը որ զինքը Արտաշէսի աթոռին առջեւ բերեր է: Այս եղելութեան ակունստիս եւ թագուհիին մտերիմ երգչախումբը օգնութիւն կը խնդրէ Աստուծոյ որ անմեղութեան զօրավիզն է և ոճիրը ամօթապարտ կ'ընէ:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՑՈՅՑ

Յուլիս 20	† Կիր. դկ. Դ.— Զկնի վարդապետի
21	Ռշ. ամ. Քրիստափորի վկային եւ երկուց կանանցն Կալիֆիկեայ եւ Ակիլիքեայ
22	Դշ. ակ. Պետրոսի Հյւսիսի եւ Աբիս. Սարկաւագին
23	Դշ. լմ. Պահոց
24	Եշ. րկ. Թէոդոսի թագաւորին եւ մանկանցն Եփեսոսի
25	Ուրբ. գմ. Պահոց
26	Շր. գկ. Կիրակոսի եւ մօր նորա Յուլիսայ: եւ Տրիփոնի վկային:

Մ Ե Յ Ն Ե Ր Ս Է Ս

(Շար.)

Ա. Ներսէս Արշակ թագաւորին հաւանութեամբ Աշտիշատի մէջ ժողովի կանչեց եպիսկոպոսները և աւագ իշխանները: Այս ժողովին մէջ որոշուեցաւ.

Ա. Պահել աստիճաններու և իշխանութեան կազմը Եկեղեցւոյ մէջ և պատուի և մեծութեան կարգունեաց մէջ, որպէս զի խաղաղ մեան Եկեղեցին և արքունիքը:

Բ. Պահել ամենամեծութեան օրինաւոր կարգը՝ մինչեւ եօթներորդ աստիճան. և ըստ կանոնաց հրաժարի նաև մերձաւոր խնամութեան, որպէս զի չըլլայ թէ իշխաններէն կամ ազատներէն մէկը, հայրենի ցեղապետութիւնը պահելու պատճառաւ ազգականաց հետ ամուսնանայ:

Գ. Մեռեալները թաղել քրիստոնէական օրինաց համեմատ և ողբ ու կոծ չընել անոնց վրայ հեթանոսաբար, իբրև զուրկ հասարակաց յարութեան յոյսէն:

Դ. Հրէական խորանքով և հեթանոսական անգթութեամբ ուրուկներն ու պիսակոսները չհալածել ջրել անբնական եղեր, անդարման, սովալլուկ, կերգազաններու. այլ ամէն ցաւազնոսներու համար յատուկ գարմանավայրեր շինել Հայաստանի բարեխառն կողմերը. ընդհանրութեամբ համար ուրկանոցներ, կոյրերու, կաղերու և ուրիշ հաշմանդամներու համար անկեղանոցներ. նոյնպէս, հիւանդանոց, որւանոց, ալիւանոց, աղքատանոց, օտարանոց, հիւրանոց, հոգեւորական Ստանց պիտոյքները հոգալու համար որոշեց գիւղեր, պաշտօնեաներ, վերակացուներ և անոնց ամէնուն վրայ ընդհանուր հոգաբարձու և տնտես գրաւ իր հաւատարիմ սարկաւագը, խաղ Երանելին, կարնոյ գաւառէն, Մարգաց գիւղէն:

Ե. Որոշեց որ աշխարհէ հրաժարած առանձնականները սիրեն և պահեն իրենց առանձնութիւնը կրօնաւարական կանոնաց համեմատ. Քաղաքներն ու

աւանները աշխարհակամայ տուները չդիզերին վայրագար, և վանքեւէն դուրս չընտկին: Եւ որովհետեւ կրօնաւորները այնքան շատացեր էին որ կրօնաստանները քիչ կու գային, որոշեց շինել ուրիշ վանքեր, եղբայրանոցներ, մենաստաններ, միայնանոցներ և իւր-ճիթներ՝ մենակեցութեան զանազան կարգերուն համեմատ: Ասանց ամէնուն վրայ ալ ընդհանուր տեսուչ դրաւ առաքինի Եփրատան, Եպիփանը, Եփրեմը և Գինգ: Աղկունին իւրաքանչիւր կարգերու ալ առանձին առաջնորդներ ընտրեց:

Այսպէս Ս. Ներսէսի օրով, Հայաստան ծաղկեցաւ և բարգաւաճեցաւ: Քաղաքները, աւանները, անապատներն անգամ փայլեցան նորանոր շինութիւններով ու բարեկարգութիւններով: Բազմաթիւ եկեղեցիներ և վանքեր շինուեցան, եկեղեցւոյ պաշտօնականներուն թիւը շատացաւ: Ընտները կրօնաստաններով լեցուեցան, ինչպէս Եպիփատի մէջ Ս. Անտոնի օրով: Կ'ըսուի թէ Ս. Ներսէս, մեծ ու փոքր ընդամենը երկու հազար քառասուն լոտք շինել տուեր է: Յոյն և Ասորի գրութեան կրթարաններն ալ բազմացուց. և փոյթ տարաւ որ եկեղեցականութեան տախճանին բարձրացողները հմուտ ըլլան աստուածային և արտաքին գիտութեանց:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԶԷՆ

Գիրք Ա. — Գլ. ԺԱ. — Խաղաղութիւն ստանալու եւ յառաջդիմութեան եռանդին վրայ: (Շար.)

Դժուարին է սովորութիւնները մեկդի բողոք. սակայն աւելի դժուարին է իր կամաց դիմ գործել:

Սակայն երկ պոյսի ու յերեւ բաւերը չյաղքես, երբ դժուարագոյնները պիտի յաղքես:

Ի սկզբան անդ դիմ կեցիր իմ միտքեանդ. եւ չար սովորութիւնդ վտիտ, գի մի՛ գուցե օսկաւ աւելի մեծ դժուարութեան օսկի զեղ:

Երկ խորհիր քե դու ո՛րչափ մեծ խաղաղութիւն պիտի վայելիր եւ ուրիշներուն ո՛րչափ մեծ ուրախութիւն պիտի պատճառէիր իմ քարի վարժովդ, կարծեմ քե աւելի փոյրեւանդն պիտի չլլայիր հոգեւոր յառաջդիմութեանդ հաւատ:

ԵՐԿՈՒ ՀԻՒԱՆԴ ՄԱՅՐԱՊԵՏ

ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԲԺՇԿՈՒՄ

Տարի մը առաջ, երկու մայրապետ, մէկը Բիւլացի, միւսը Ֆիօրէնցացի, ծանրապէս հիւանդ էին իրենց Ֆիօրէնցայի վանքին մէջ: Աղպախտը (tuberculose) զիրենք կը հիւժէր. մէկը ամբողջ մարմնով վարակուած էր անով:

Եւ ենթարկուած էր նաեւ փորմաշկատապի (péritonite): Սակայն երկուքն ալ երկատարադ էին, մեծը տակաւին 27 տարեկան էր: Ասոնք միաբերին զրին, մանաւանդ թէ, Աստուած միաբերին զրաւ, որ եթէ Հոռոմ երթան, Պրոս Ժ. Ի օրհնութիւնը անունը կը բժշկուին: Բնականաբար Մեծաւորուն սկիզբը դէմ կեցաւ անոնց Հոռոմ կրթաւուն: Բայց իրենք խնդրանքին կրկնեցին... Մեծաւորու հին թերեւս պիտացաւ թեմէն ազատելու համար կամ յաւէտ որպէս զի անոնք մեռնելէ առաջ սփոփանք մը ունենան, վերջապէս հաւանութիւն սուաւ: Կը մնար ընդունիլ աւելի դժուարին հրաման մը, բժիշկին հրամանը: Բժիշկը անոնց խնդրքը յիմարական համարելով երկար ատեն դէմ կեցաւ, բայց վերջապէս զիջաւ ըսելով. «Եթէ կ'ուզեն Հոռոմ մեռնիլ, թող երթան»: Հոռոմ կեցող Ֆրանչիսկեանց ընդհ. Մեծաւորէն եւս հրաման խնդրուեցաւ եւ ընդունուեցաւ: Զգուշութեամբ շոքեկաւքը դրին երկու ծանր հիւանդները, որ Հոռոմի կայարանը հասան նուազած վիճակի մէջ: Բարեբախտաբար Պելճիգայի հիւպատոսը հոն ըլլալով, զանոնք Ֆրանչիսկեան կուսանաց վանքը տանել տրուաւ: Ֆրանչիսկեանց ընդհ. Մեծաւորը եկաւ անոնց յով եւ վիճակին տեսնելով ըսաւ. «Եթէ այսչափ հիւանդ ըլլանիդ պիտաւիր, ձեզի զալու հրաման չէի տար»: — «Աղէկ որ չէիք զիտեր», պատասխանեց մին նորոգմտութեամբ: Ուրիշ տասը օրէն հազիւ կարելի եղաւ զանոնք քիչ մը ողելորել եւ Վատիկան տարուելու վիճակին մէջ դնել: Այս միջոցին Ս. Բահանայապետին ունիկորութեան հրամանը ընդունուեցաւ եւ միանգամայն բժիշկ մը կանչուեցաւ որ զանոնք դարմանէ: Աստուծոյ մասնաւոր Նախախնամութեամբ կոշուած բժիշկը մանրէարանութեան մասնապէս եւ Քաղաքապետութեան բժշկական ակումբին նախագահն էր: Տեսաւ մայրապետները, քննեց, ականջեց, հիւանդութիւննին ճանչցաւ եւ հետեւցուց թէ քանի մը օր հազիւ կրնան ապրիլ:

— Տէ՛ր բժիշկ, եկած ենք Պապէն բժշկուելու համար:

— Բոյրեր, մտքերնիդ ի՞նչ դրած էք : Ահա այսպէս առիթ կը տրուի կրօնի վրայ գէշ խօսուելու . հիմա կ'ուզեն որ Քահանայապետը հրաշք գործէ : Բայց , յարեց կուրծքը տնկելով , մենք պրոպատիկէ աւագանին ժամանակը չենք ապրիր :

— Տեսնենք , պատասխանեց մայրապետներէն մէկը :

Որոշեալ օրը պատրաստուեցան Քահանայապետին առջեւը ելլելու : Ընդհ. Մեծաւորը աղաչեց Քրանսացի Ֆրանչիսկեան Հ. Տանէին որ հաճի երկու հիւանդ քոյրերը Պիոս Ժ. Ի ներկայացնել : Կառքով տարուեցան հիւանդները մինչեւ Վատիկան եւ վերահանով հանուեցան մինչեւ երկրորդ դատիկոնը ուր Ս. Քահանայապետը կը բնակի : Ունկնդրու թեան սրահը հասնելու համար հարկ էր դեռ կտրել անցնիլ շատ մը սրահներ , երկու հիւանդները իրենց հետ եղող երկու առողջ քոյրերու օգնութեամբ կը փորձեն քալել , բայց գետին կ'իյնան . Հ. Տանէ քովերին կը փութայ , ի հարկին արձակում տալու համար : Հոն գրտնուող քահանայապետական պահանջողները եւս կը հասնին եւ հիւանդներուն վիճակը տեսնելով , դահաւորակ կը բերեն եւ հիւանդները անոր մէջ դնելով , իրենց հովիտու ուսերուն վրայ առած , կը տանին ընդունելութեան վայրը : Հոն մէկ անկիւնը կը կենան երկու առողջ քոյրերն ալ . իսկ Հ. Տանէն կանգ կ'առնու գրան քովը : Դուռը կը բացուի շուտով եւ Ս. Քահանայապետը յամբաքայլ կը յառաջանայ . քանի մը խօսք կ'ըսէ Հ. Տանէին եւ երկու հիւանդները ցոյց տալով կը հարցնէ .

— Ո՞վ են ասոնք :

— Ս. Հայր , ասոնք երկու հիւանդ մայրապետ են , որ եկած են ձեզմէ խնդրելու որ զիրենք օրհնեք :

Վեր . Հայրը չհամարձակեցաւ ըսելու բժրեկեք , ինք կատարեալ վստահութիւն չունէր :

— Հիւանդ են , ըսաւ Քահանայապետը , այնպիսի շեշտով մը որ կը հեղեղէր Աւետարանին գրաւ ի վերայ ժողովրդեանց խօսքը : Հիւանդ էք :

— Այո՛ , եւ կ'ուզենք որ զմեզ օրհնէք , որ բժշկուինք :

— Ս. Հայր , բժշկէ՛ զիս , ըսաւ մէկը , որպէս զի կարենամ կանոնս պահել :

Ս. Հայրը վայրկեան մը ինքզինքը ամփոփեց եւ յետոյ ըսաւ .

— Այո՛ :

Այս այո՛ն ուժգնօրէն արտասանուեցաւ եւ յիշեցուց կամիւս սրբեացը :

— Այո՛ , եւ դուն դեռ երկար ստեղծ կանոնդ պիտի պահես եւ Մեծաւորուհիդ պիտի միտնարես եւ հոգիներու բարիք պիտի ընես :

— Ս. Հայր , ես ալ , ըսաւ միւս մայրապետը :

— Այո՛ , այո՛ , ըսաւ Քահանայապետը :

Եւ ապա արտասանեց օրհնութեան բանաձեւը ա՛յնքան բարեպաշտօրէն որ Աստուածութեան հետ : հաղորդակցութեան մէջ ըլլալու տպաւորութիւնը կ'ընէր ներկայից վրայ : Օրհնութենէն վերջը Մայրապետները բռնուեցան յանկարծական դող մը , զոր Քահանայապետը չտեսնելու զարկաւ : Քանի մը խօսք ալ ուղղեց Մայրապետներուն , յետոյ Հ. Տանէին վերադառնալով ըսաւ .

— Հիմայ կրնանք գործառնութեանց վերայ խօսիլ :

Կից յարկաբաժին մը մտան , եւ քիչ մը յետոյ երբ դարձան Հ. Տանէն ըսաւ .

— Ս. Հայր , օրհնութիւն մըն ալ :

— Այո՛ անգամ մըն ալ ըսաւ , Քահանայապետը եւ նորէն օրհնեց Մայրապետները որ այս անգամ ծունկի եկան : Քահանայապետը մեկնեցաւ : Երկու Մայրապետները Հ. Տանէին ձեռքը բռնելով իրեն կ'ըսեն . — Հայր , բժշկուեցանք :

— Այո՛ , պիտի բժշկուիք , որովհետեւ Քահանայապետը այնպէս ըսաւ :

Հ. Տանէն կը սպասէր պահանջողներուն որպէս զի տանին հիւանդները ինչպէս որ բերած էին : Բայց երկու մայրապետները ոտքի կ'ելլեն եւ կը կտրեն կ'անցնին սրահներն ու անցքերը :

— Ո՞վ են ասոնք , կը հարցնեն հոն եղողները :

— Ասոնք քիչ մը առաջուան մայրապետներն են , կը պատասխանէ Հ. Տանէ՛ սիրտը ելած եւ արտասուաթոր : Աննկարազրելի է ներկաներուն զգացած յուզումը :

Տուն որ դարձան, առաջին գործքերնին եղաւ մատուռը երթալ Յիսուսի շնորհակալ ըլլալ: Յետոյ ճաշարան գացին և այն մայրապետները որ տառը ամիսէ ի վեր լոկ հեղուկով կ'ապրէին, սկսան ուտել ապուխտ եւն. եւն.:

Ապա կու գայ բժիշկը:

— Տէ՛ր բժիշկ, Բոյրերը բժշկուած են:

— Բժշկուած, տեսնե՛նք, պատասխանեց բժիշկը և քննեց, այլ եւս տենդ չկար: — Ինծի երեք օր պէտք է, յարեց: Տուն երեք օր քննեց, ականջեց... շոշորդն իսկ չէր մնացած ո՛չ վերքի, ո՛չ տենդի, ո՛չ աղպախտի: Բժիշկը ուղղամիտ մարդ մը ըլլալով, յանձն առաւ ստորագրել վկայագիր մը հաստատելով՝ մայրապետներուն Վատիկան երթալէն առաջ եւ վերջը ունեցած վիճակը:

Այս դէպքէն քիչ ժամանակ վերջը այս երկու հիւանդ Բոյրերը հիւրընկալող Մեծաւորուհին Ս. Քահանայապետին ունկնդրութեան ընդունուած ըլլալով անոր ըսաւ.

— Ս. Հայր, կը յիշէ՞ք այն երկու հիւանդ մայրապետները:

— Այո՛, ի՛նչ կայ:

— Դասատուութիւն կ'ընեն:

— Ահ, ըսաւ Քահանայապետը, անոնք կատարեալ հաւատք ունէին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ս Կ Ա Ն

Հ Ո Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Ե Ն Ա Ր Հ

Ամսոյս 7ին Ս. Հայրը Վատիկանու ապարանքին մէջ շքեղ ընդունելութիւն մը կատարած է, Ս. Դաստոյի յորջորջուած արքայական բակը: Նորին Սրբութիւնը իր պալատական հետեւորդներէն և Եպիսկոպոս շրջապատուած եկաւ Ռաֆայէլի դահլիճներուն մեծ պատուհանին առջեւը. վարը, յիշեալ բակին մէջ համախմբուած էին Հռովմայ և զաւառներու բարեգործական կանանց ընկերութեան անդամները՝ տանուէնէն հազարէ աւելի տիկնայք, որոնք եռանդաբին ծափահարեցին Ս. Հայրը, որ գիրենք օրհնեց՝ յուզուած անոնց ցոյց տուած որդիական սիրոյ ջերմ արտայայտութենէն: Ասոնք միաբերան երգեցին այն ժողովրդական երգը որ կը սկսի. Կ'ուզենք զԱստուած մեզի հայր, կ'ուզենք զԱստուած մեզի քա-

ղաւոր: Երաժիշտներու խումբը երկիցս նուագեց նաև Քահանայապետական քաղերգը:

Պարոն վոն Միլհայէրկ, Բրուսիոյ լիազօր պաշտօնեան, Յուլիոս 4ին, Վատիկանի աւագ երկական պալատը գնաց հանդիսաւոր արարողութեամբ: Առաջնորդուեցաւ Ս. Քահանայապետին յարկաբաժինը, ուր Ն. Սրբութենէն ընդունուելով, անոր յանձնեց Վիլհելմ Բ. ի քննադիր նամակը:

Այս նամակը կը պարսւնակէ գերմանական դաշնակցութեան Վեհապետին շնորհակալութիւնը՝ այն շնորհաւորութեանց համար զորս Պիոս Ժ. ուղղեց Վիլհելմ Բ. ի, անոր գահակալութեան քսանեւեհինգամեակին առթիւ:

Քահանայապետական ունկնդրութենէն յետոյ լիազօր պաշտօնեան, իջաւ Վաթ. Մէրի տէլ Վալկարդինային պետական դիւանին յարկաբաժինը, և անոր, Ապստոս կողմանէ, յանձնեց կայսերական նամակին մէկ օրինակը:

Հռոմի քահանայապետական փոստարաններու ակումբը կը կազմուի յիսունի չափ փաստաբաններէ, որ ընդունուած են քահանայապետական վարչութեան ատեսաններուն մէջ:

Երեք նոր երեւելի փաստաբաններ՝ Հռոմի դատական ատեսանին տուջեւ պաշտօնավարելու համար հարկ եղած երգումը ըրին:

Յիշեալ ատեսանին բոլոր աւանդները արարողութեանց ներկայ գտնուեցան:

Յուլիոս 10ին Հռոմ հասան Պերլինցի ուխտաւորներ: Ասոնց մէջ կը գտնուին վաթսունի չափ եկեղեցականներ, երկու հարիւրի չափ կաթողիկէ աւուսժիշներ և ուսուցչուհիներ եււրիշ 400 գերմաններ:

Երկու հարիւր տարի առաջ Պաւլինի մէջ հազիւ մէկ եկեղեցական կար, ան ալ իբրեւ Հռոմէական Սուրբ-Պետութեան կայսեր ներկայացուցչին պաշտօնատան կցորդ:

Մեծն Բրիտանիոյ և Իռլանտայի Թագաւորին պահանջներուն մէջ 780 կաթողիկէ իռլանտացիներէ բաղկացած գունդ մը կայ: Ժօրժ Թագաւորը վերջերս այս գունդին շնորհեց նոր դրօշակ մը, որուն կրօնական օրհնութիւնը կաթողիկէ արարողութեամբ տեղի ունեցաւ ի ներկայութեան Նոյցին Վեհափառութեանց, Լիտուանի կայսերական ապարանքին դարաստանին մէջ:

Օրհնութենէն վերջը դրօշակը մատուցուեցաւ Ժօրժ Թագաւորին և Ն. Վեհափառութիւնը յանձնեց զայն երկու երիտասարդ տեղակալներու որոնք ծուկի գալով առին զայն:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ինչպէս մեր անցեալ թիւին մէջ գրեցինք, Ա. Յ. Կուսանաց Կարգին ընդ հանուր Մեծաւորութիւն ընտրուեցաւ Առ. Ք. Պրիճիտա Սալլըդճեան, որ իր խօսքով փորձառու և բարեբաւոյ ընթացքով անշուշտ մեծապէս պիտի սատարէ այս արդիւնաշատ Միաբա-

նութեան, որ տարիներէ ի վեր սուրբ կրօնքին հաստատարար Դաւադար է, հասցնելով խղճամբառ ու պարտաճանաչ ստեղծ հիներ, միեւնոյն ժամանակ ստատարած է նաև ազգային լեզուի տարածումն և առհասարակ բարձր գոտարարակութեան ծաւալումն թէ՛ հոս և թէ՛ գաւառներու մէջ, ուր այլեւայլ կեդրոնավայրերու մէջ մասնաճիւղեր հաստատած է:

Խորհրդական Ժողովը կազմուած է հետեւեալ Բոյրերէն. Ք.Ք. Մէթիլտէ Մէլքիսեդեկեան, Քրիստոնէ Քիւնտիւպէկեան, Եւփրոսինէ Ճիվանեան, Բարբին Քէշէճեան:

Առ. Ք. Եւգինէ Բեքմէդեան, որ կանոնաց տրամադրութեան համաձայն կը գաղարկեմ ծաւալումն թեան պաշտօնէն, իրաւամբ արժանի է հանգիստի: Այս վեցերորդ անգամ էր որ Մեծաւորուհի ընտրուած էր. որով ստանձնութիւն տարի վարած է այդ պաշտօնը այլ եւ այլ անգամներ: Անխոր սիրուած ու մեծարուած էր՝ իր հանրածնութիւն քաղցրարարութեան և անոր անպատճառ ընկերացող թանկագին առաջինութիւններուն համար: Իրեն առաջին խորհրդական ունէր Առ. Ք. Էլպիս Կապուսեանը, որ Միտրանութեան օգտակար անդամներէն մէկն է, քաջասուն կրթութեամբ լեզուագիտութեամբ, և անխնայ ջանքերով մեծապէս սատարած է վանքին կրթական գործոյն յաւաքիմութեանը, ինչպէս շնորհակալութեամբ կը վկայեն նաև արտաքիններ: Այս մշակելով մօքին միացուցած է մանաւանդ թէ՛ հիմ ըրած է խնարհութեանը, հեղութիւնն ու հնազանդութիւնը, որոնք իրական պարգեւն են գլխաւորաբար սքեմաւորներու և զոհարարներն և կուսանոց պատկին: Միւս խորհրդականներէն էին՝ Ք.Ք. Թէոփիսէ Ալէքսանեան, Քրիստոնէ Քիւնտիւպէկեան և Ռոգա Բարսաղապէան:

Յուսակ է և փոփաքելի որ թէ՛ Միտրանութիւնը և թէ՛ իր կրօնքի և ազգի հաւատարմութեան օգտակար գոտարարական գործունէութիւնը օր ըստ օրէ յաւաքիմէ և բարգաւաճի, և անձնագործ ողջակէզներով կազմուած այդ կուսական խումբը Յիսուսի Ս. Սրտին միշտ հաճելի ըլլայ իբր տնարատ հարսեր՝ ընծայելով յետեւ յետեւ, և բարի օրինակներ հաւատացեալներու և բարեբաններ մարդկութեան:

Յուսիս Այն Ֆրանսայի ազգային սօնը շնորհաւորելու համար Ֆրանսական դեսպանատունը զնաց Ամեն Հոգեւոր Տիրոջ կողմանէ Արհի. Վ. Պատրիարքական Փոխանորդը, Յովս. Արքեպ. Ռոքոսեան ընկերակցութեամբ Գերջ. Յովհ. Մ. Վ. Թումանեանի, և սիրալիբ ընդունելութիւն գտաւ Մ. Պարէն:

Կեսարիոյ Արհիպատիւ Վիճակաւորը Անտոն եպսկ. Պահպանեան, որ վերջերս Անկիւբիւրի կը գտնուէր, իր յօրացաւոր գործունէութեան համար գացեր է Անկիւբիւրի մօտակայ գիւղի մը հանքային ջուրերը:

Լիւթաննու կառավարիչ Վսեմաշուք Յովհաննէս փաշա Գուլումճեան Յուսիս Այն իր Ազնուազարմ Տիկնոյ և Համեստափայլ բրոջ հետ և բազմաթիւ հետեւորդներով առաջին անգամ այցելեց

Զմառ վանքը: Զմառեան միաբանները մեծ պատիւներով ու խանդավառ ցոյցերով ընդունեցան հայ Իշխանը: Իրեն նուիրուած ուղերձներէն և երգերէն վերջը Ն. Վսեմ. Տերութիւնը յուզուած շեշտերով յայտնեց իր շնորհակալութիւնը և գոհութիւնը և բառ. Երջանիկ կը համարիմ ինքզինքս գտնուելով հայ հասարակութեան մը մէջ, որ իր փառաւոր անցեալով և բազմաթիւ ներկայով հայրենիքի պարծանքն ու բարեբարը եղած է: Ապա մաղթեց յարաճուն պայծառութիւն և զարգացում:

Յաջորդ օրը, կիրակի, իր հետեւորդներուն հետ մեծ ջերմեւանդութեամբ ներկայ եղաւ լաւնաւոր պատարագին զոր մատուց Գերջ. Սուքիաս Մ. Վ. Ջրեան: Իրիկունը ի պատիւ իրեն հրախողութիւններ և յուսավառութիւններ կատարեցին և երկու պալոն թոցուցին:

Երկուշաբթի կէսօրէն յետոյ վանքէն մեկնեցաւ առօր փառք դէպի Ճիւնի: Ճամբան այցելեց Լիւթաննու Տիրամօր հսկայ և հոյակապ արձանը, որ ծովահայեաց բարձր սարի մը վրայ կառուցուած պտուտակածէ մատուռի մը կատարը կանգնած՝ կ'իշխէ Ճիւնի, Վերիտնի, Միջերկրականի և ամբողջ շրջականերուն վրայ: Հոն աղօթեց ջերմեւանդութեամբ և մատուռին արձանագրութեան մատենին մէջ գրեց. «Հոս եկայ խորհելու Լիւթաննու փառաւոր Ս. Կուսին բարեխօսութիւնը»: Իսկ Ազն. Տիկին Գուլումճեան գրեց «Հոգր Ս. Կուսին վրայ դրած եմ իմ բոլոր յոյսս»:

Ճիւնի նուագախումբով ընդունեցան զինքը Մանուկեան Եղարք և պատուաւորեցին իխանավայել մեծարանքներով:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր

Յուսիս Այն, Էջմ. Ազգ. Ժողովին մէջ որուն կը նախագահէր Օրմանեանը, բուռն վիճարանութիւններ տեղի ունեցան Երուսաղէմի կանոնագրի նախագիծին մասին: Կղերականները, զլուսնին ունեւարով Օրմանեանը, բողբեցին Երուսաղէմի վանքին մատակարարութեան աշխարհականաց յանձնուելուն դէմ, ինչպէս կը տրամադրէ այդ նախագիծը. բայց աշխարհականները զրիթէ միաբերան ջախջախիչ պատասխաններով խեղդեցին այդ բողբը և սրտեցին իրենց սկսած գործը յաւաք տանի և արածելի վարչութիւնը կազմելու, ի հարկին, անտեսական մարմին մը որ ձեռք առնու վանքին մատակարարութիւնը:

Վերջերս Հ. Լյմիտանական կրօնական Ժողովին բրած մտաւանդութեանը ոյնքան մեծ համեմատութիւններ և աղաղակող գալթակողորց հանդամանքներ առած են, որ պարկեշտ և զիտակեց աշխարհականներ անգամ սխառ են բողբել այս ազգակործան արարքներուն դէմ:

Չենք կրնար ըմբռնել թէ Էջմ. եկեղեցին և իր Էջմիան Ժողովները Աւետարանին ո՞ր էջէն կամ Հալալատանեաց Եկեղեցւոյ ո՞ր կանոնական իրաւունքէն կամ Ժողովոյ սահմաններէն առած են այս սեռակ յալաւան մասնաւորութիւններ հրատարակելու իշխանութիւնը կամ... յաւանութիւնը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Օսմանեան բանակը յառաջացաւ և գրաւեց Լնտ-
Միտիա գծէն ապին եղող հորամասերը ու քաղաք-
ները, որոնցմէ արդէն ետ քառուս էին Պուլկարի դոր-
քերը:

*. Օսմ. Լոյտ կ'ըսէ թէ Պուլկարէն մեկնող
օսմ. բանակը Յուլիս 15ին ժամանած է Լնտ-Միտիա
սահմանագլուխը և կարճատեւ հանգիստէ մը ետքը
շարունակած է իր յառաջնադասը:

*. Կ'ըսուի թէ Պուլկարները Էտիրնէն կը պար-
պեն. և օսմ. բանակը Էտիրնէի վրայ կը քալէ:—բայց,
կը գրէ պեռլինեան թերթ մը. Այսօր Չաթալճայի և
Էտիրնէի միջեւ դառնաւ ճամբան շատ երկար է
Թուրքերուն համար, և ոչ միայն զինուորական այլ
նաև զբնակչութեան դժուարութիւններ կան:

*. Պուլկարներու Ռոտտոյէն մեկնելէն յետոյ
նոյն տեղւոյն մէջ ջարդ մը տեղի ունեցեր է և սպան-
նուեր են 450ի չափ Հայեր:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պուլկար բանակը հետզհետէ ետ կը քաշուի սերպ
և հեղին զօրաց առջեւէն. թողած քաղաքներէն շա-
տերը աւարելով, աւերելով պրելով, հեղին բնակիչ-
ները ջարդելով կամ գերի տանելով:

*. Ռուսներն բանակը եւս մնաւ պուլկարական
հողը և կը գրաւէ տակաւ պուլկարական հանգները
առանց ընդգիծելու հանդիպելու. որովհետեւ
պուլկար կառավարութիւնը իր զօրաց հրամայէր է
չպատերազմիլ Ռուսներուն հետ:

Լոնսոն 15 Յուլ — Անգլիոյ Երեսփ. Ժողովին նիստը
փակուելու միջոցին արմատական երեսփոխան մը հար-
ցուց թէ Անգլիա արամաղիր չէ՞ միջամտելու Պուլ-
քանեան պատերազմին: Սըր Էտուարտ Կրէյ պատաս-
խանց թէ եւրոպական ներդաշնակութիւնը շատ
կ'աշխատի պատերազմը դադարեցնելու, սակայն խիստ
դժուար է խաղաղութիւնը վերահաստատել ճշդա-
կան միջոցներով: Նախարարը յարեց. — Անշուշտ տե-
րութեանց համաձայնութեամբ ինչ որ կարելի է

պիտի ըլլայ: Պուլկարիա Ռուսիոյ զիմեց թշնամու-
թիւնները դադարեցնելու համար: Յուսատեան և Սեր-
պիա պատրաստ են հաւանելու, բայց այն տեսակ
պայմաններով զորս Պուլկարիա պէտք է նախապէս
ընդունի: Թուրքիոյ գաղով, ապահովութիւն արուե-
ցաւ թէ միայն Միտիա-Լնտ գիծը գրաւելու մտա-
դիր է: Եթէ Թուրքիա պահէ այդ մտադրութիւնը,
անոր դէմ ալ բացառիկ միջոցներու պէտք պիտի չմը-
նայ: Վստահ եմ թէ, Թուրքիա պիտի յարատեւէ իր
մտադրութեանը մէջ, վասն զի Միտիա-Լնտ գիծէն
դէպի անդին եթէ յառաջանայ, ներկայ դժուարու-
թիւնները պիտի աւելնան: Կենսական կարեւորութիւն
ունեցող ուրիշ կէտ մը կայ, այն է թէ մեծ տէրու-
թիւնները շարունակեն իրենց փոխադարձ շփոթման և
թէ անոնցմէ և ոչ մէկը առանձին ձեռնարկ մը ընէ,
որ կարենայ դժուարութիւններ առաջ բերել անոնց մի-
ջեւ: Տէրութիւնները աչքի առջեւ ունին այդ նպա-
տակը և ապագային ալ պիտի շարունակեն դոյն: Այ-
պանիոյ մասին տէրութեանց պահանջները նպաս-
տեցին ներդաշնակութեան պահանջներ իրենց միջեւ:
Բնականաբար շատ կարեւոր է որ ներկայ տագնապին
մէջ չպատահին արդէն արուած թանկագին որոշում-
ները տակնուվրայ ընելիք դէպքեր:

*. Վերջին լուրերէն կը հետեւի թէ մէկ կողմէ
Սերպիոյ և Յունաստանի և միւս կողմէ Պուլկարիոյ
միջեւ հաշտութեան բանակցութիւնք ի մօտոյ պիտի
սկսին: Արդէն սերպ կառավարութիւնը իր այս արա-
մադրութիւնը յայտնեց պաշտօնապէս Յունաստան ալ
անհաշտ ընթացք մը պիտի չբռնէ: Կը մնան Ռուսա-
նիա և Թուրքիա: Աւաջինը գրեթէ իր բոլոր ուղած
հողերը գրաւեց և հաշտութիւն կնքելու համար բա-
նակցութեան չմտնելու պատճառ մը չունի: Գաղով
Թուրքիոյ, ուշադրաւ է որ Անգլիոյ արտաքին գործոց
նախարար Սըր Էս. Կրէյ յոյս յայտնեց թէ օսմ. կա-
ռավարութիւնը պիտի սահմանափակէ իր զինուորա-
կան գործողութիւնը: Թուրքիա անշուշտ չ'ուզեր (նոր
կնճառութիւններ աւելցնել արդէն զանաւանդներուն
վրայ), ըսաւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	449
Եր. Տէր Կոմիտաս Նահապետի պատմական երկու գրութիւններ	453
Ս. Յովնանէ Բիլիսարներն Քաղիւրի	456
Եսթր	457
Եօքնեակ Քրիստոնէի	459
Երկու հիւանդ մայրապետ Վասիլեանի մէջ կը բժշկուի	460
Տեղեկագրական	462

ԱՐՏՕՆԱՏԵՐ


ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Կ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արմազանց Զարաթերթի, Բերդ, Պայրամ փողոց բիւ Ծ, Ա. Պոլիս



ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դիկ.:— Արսաւսիման՝ տար. ճր. 10. վեցամս. 5.—Վհարմունք կանխիկ են:
ՀԱՍՑԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՐ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքար օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհառ կամ նոյնութեամբ նրաստակելի իրեն զրկուած ու եւ է յողաւած: 3.—Կեղծանունով զրկուած յողաւածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ քննարանիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բոլորին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրուել ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ընտանեացի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական զորոյց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրապարակներ, քարտեր, բարդ-տարեաններ, մահազգներ, եւն., եւն.: Դիմելու ամսուրը կը տրուի ամսան: Դիմելու ամսան եւ տպագրական մատուցեան կողմանէ յանձնարարները անհրաժեշտ զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹ ԵՍՏԱՐԱՆԻ Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիմ, ամսուր քղ քանկազմը 2 դիկն.:
